№ 146 Օգոստոսի 12 Հինգշաբթի 1882 Օգոստոսի 12 Հինգշաբթի № 146

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անմիտ մեղադրանք։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Նուխուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՆՄԻՏ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Մեր խաւարասէր մամուլը շարունակում է մեզ դէմ իր անմիտ մեղադրանքները։ Նա հաւատացնում է որ ամենալաւ ապացոյցը որ „Մշակը“ բողոքականութեան պրոպագանդայով է զբաղված այն է, որ մենք չենք զսպում մեր լրագրի մէջ պ. Աբրահամ Ամիրխանեանի գործունէութիւնը։

Դրանից աւելի անմիտ բան չէր կարող ասել խաւարասէր մամուլը։ Մենք ի՞նչ իրաւունք կամ ոյժ ունենք սրան կամ նրան զսպելու։ Մենք նոյնքան չենք կարող զսպել Ամիրխանեանցի գործունէութիւնը, որքան մի հայ կաթոլիկինը, և այլն։

Բայց ամենալաւ ապացոյց որ մենք անտարբեր ենք դէպի ամեն կրօնները, միայն անտարբեր չենք դէպի ընդհանուր, բարոյական, յաւիտենական ուսմունքը քրիստոնէութեան, այն է որ մենք առաջինն էինք, որ հրաւիրեցինք հայ-լուսաւորչականներին կազմել մի միսիոնարական լուսաւորչական ընկերութիւն։

Մեր պրինցիպն է մաւոր ազատութիւնը. թող ամեն մարդ իրաւունք ունենայ իր մտքերը յայտնել, քարոզել։ Կուզեցէք, մարտընչեցէք, մաքառեցէք այն մտքի դէմ, որին հակառակ էք։ Մտքերի միմեանց շփումից միայն լոյս է ծագում։

Ամիրխանեան, կամ մի այլ ոք, մեր ստրադրեալը չէ, որ մենք կարողանայինք նրան հրամայել։ Շատ բան կայ, գուցէ, որ մենք չէինք ուզենայ որ գոյութիւն ունենար. օրինակի համար խաւարասէր մամուլը։ Բայց մենք չենք կարող հրամայել որ նա լուռ մնայ և չը շարունակէ իր վնասակար գործունէութիւնը։ Նրա դէմ մարտնչել մենք կարող ենք միայն հակառակ մտքեր յայտնելով։ Նոյնը ասում էինք մենք ազգին և բողոքականների վերաբերութեամբ. եթէ համոզված էք որ նրանք վնասակար են, կազմեցէք, դուք էլ, մի լուսաւորչական միսիոնարական ընկերութիւն, փոխանակ հայհոյելու ու ապարդիւն կերպով գանգատվելու։ Նրանց խորհուրդ էք տալիս հանգիստ թողնել քրիստոնեաներին և քարոզել մահմետականների մէջ,—դուք ինքներդ կազմեցէք մի լուսաւորչական միսիոնարական ընկերութիւն և հայ-մահմետականներին լուսաւորչականութեանը դարձրէք։

Մեր խաւարասէր մամուլի լոգիկան, ինչպէս ամեն խաւարասէրների, շատ խարդախ է։ Հարկաւոր ժամանակ նա ջանում է համոզել ընթերցողին որ խեղճ „Մշակը“ և նրա խեղճ խմբագիրը իրանք ոչինչ համոզմունք չունեն և այնքան միամիտ են որ միայն խաղալիք են Ամիրխանեանի, կամ մի այլ մարդու ձեռքին, ուրեմն իրանք չը գիտեն ինչ են անում,—իսկ հարկաւոր ժամանակ աշխատում են մեզ ցոյց տալ որպէս ամբողջ մի ահագին կրօնական պրոպագանդայի գիտակցական գլուխ, որից մինչև անդամ կախված է, մի ինչ որ դերբնական ոյժ ունենալով, զսպել, կանգնեցնել արգելել, փոխել, բնական, հասարակական երևոյթներին, մեզանից շատ առաջ ծնված մտաւոր շարժման բնական ընթացքը։

Մարդս կարող է միայն այս կամ այն կերպ առաջնորդել այս կամ այն հասարակական երևոյթ, բայց ծնեցնել ստեղծագործել երևոյթներ նրա ուժից վեր է։

Վերջապէս 1872 թուին երբ մենք սկսեցինք մեր գործունէութիւնը արդէն ամբողջ Անդրկովկասի հայերի մէջ բողոքականութիւնը և կաթոլիկութիւնը տարածված էին։ Բողոքականութիւնը արդէն սկսեց տարածվել մեր մէջ քառասներորդ թուականներում, երբ „Մշակի“ խմբագիրը դեռ նոր էր ծնվել հեռու հիւսիսում, հայութեան կենտրոններից դուրս։ Իսկ կաթոլիկութիւնը դրանից էլ շատ առաջ։

Մենք երբ սկսեցինք մեր գործունէութիւնը,—քարոզեցինք հաշտութիւն և հրաւիրեցինք միայն բոլոր եղած այլակրօն հայերին միանալ ազգութեան գաղափարի մէջ, փոխանակ խաւարասէր մամուլի պէս, շարունակելու թշնամութիւն և երկպառակութիւն նրանց մէջ սերմանելու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յուլիսի 28-ին

Տեղիս յայտնի նաւթագործարանատէր չվէդցի պ. Նոբէլի նաւթային գործերը շատ արագ ու յաջող քայլերով են առաջ գնում, այնպէս որ մենք՝ մանր-նաւթագործարանատէրերս այժմ նաւթականապէս աննախանձելի, կամ աւելի պարզ ասած վերին աստիճանի յուսահատ դրութեան մէջ ընկղմված ենք։ Նա ամենայն կատարելութեամբ իր գործերը մի այնպիսի յարմարութեամբ է տանում, որ մենք նրա հետ մրցել անկարող ենք, և մինչև անդամ «մրցել» խօսքը երազել էլ դժուար է մեզ համար, քանի որ չը կայ մեզնում համաձայնութիւն ու միութիւն։ Այս մասին շատ անդամ է խօսվել լրագրութեան մէջ։

Այժմ դիմելով նամակիս բուն նպատակին, կամենում ենք ընթերցողին ծանօթացնել մեր նաւթավաճառների (нефтопромышленникъ) և նաւթանցուցիչների հետ (нефтопроводникъ) և երևան հանել սրանց հարստահարիչ գործունէութիւնը և վարմունքը մեր վերաբերութեամբ։ Այստեղ չենք յիշում այն նաւթանցուցիչներին և նաւթավաճառներին, որոնք իրանց կարողութեան չափ օգնում են մեզ։

Մենք, մանր-նաւթագործարանատէրերս, որ վերին աստիճանի յուսահատ դրութեան մէջ ենք գտնվում, միմիայն յոյս ունենք մեր նաւթավաճառների և նաւթանցուցիչների մարդասէր խնամակալութեան վրա, որ նրանք կը պահպանեն մեզ ու կը հոգան մեր ներկայ և ապագայ վտանգաւոր դրութիւնը բարւոքելու և վերջապէս նրանք խրդճալով մեզ նեցուկ կը լինեն մեր գերդաստանի կենսատու պիտոյքներին մարդասիրութեան անունով։ Բայց մեր յոյսերը ի դերև ելան։ Նրանք այսօր ամենայն ճարպիկութեամբ ու խարէբայութեամբ ճնշում են մեզ։ Նրանք այնպէս են քերթում մեր կաշին, որ այդ նկարագրելը անկարող է մեր տկար գրիչը։

Օրինակ. մի նաւթավաճառ, որ իր սեփական նաւթահորից ստանում է օրինակ 4—5 հազար պուդ լաւ 860—865 աստիճանի նաւթ *), նա սկսում է մեզ, նաւթագործարանատէրերիս ծախել օրեկան 15—20 հազար պուդ, ի նկատի ունենալով իր հարևանի վատ 895—905 աստիճանի այն նաւթը, որը յորդ ինքնաբխելովը (фонтанъ) միլիոն պուդերով ժողոված մի ահագին լճակ է դառել և առևտուրի ճգնաժամի պատճառով չատերը անկարող են լինում արդիւնահանել այդ ընութեան նուիրած պարգևը և կամ որոնք չեն կատարելագործել իրանց առևտուրի չըրջանը։ Վերջապէս թէ թանդ, թէ էժան, մեր նաւթավաճառը որ մեզ ծախում է լաւ նաւթ, ինչ քանակութեան, ինչ գումարի և ինչ ժամանակի էլ լինի, իսկոյն նոյն գումարին ձեռացաղիր է վերցնում մեզնից։ Մենք գնողներս ուրախանում ենք թէ յաջողվեց նիսիա և մի և նոյն ժամանակ թեթև նաւթ գնել, բայց խորամանկ վաճառականներն էլ իրանց սրտերումն են ուրախ, թէ վաճառեցին այլոց լճակների մազութը **) փոխարէն լաւ նաւթի։ Թէ այսպէս և թէ այնպէս մենք սկսում ենք մեր գնած նաւթը ստանալ նաւթանցուցիչների երկաթեայ խողովակների միջոցով և կամ երկաթուղու նաւթակրակառքերի միջոցով ***)։

Մենք ստանում ենք 860—865 աստիճանի նաւթը, 5—10 օր յետոյ կամաց—կամաց 865 աստիճանից նաւթը բարձրանում է 875—895 և յանկարծ նայում ենք որ 905 աստիճան է բարձրացել վաճառականի զովելի նաւթի ծանրութիւնը։ Հիմա նայելով նաւթի այդ տեսակ սարսափելի ծանրութեանը, մենք ամենայն արագութեամբ ներկայանում ենք նաւթավաճառին և խնդրում ենք, աղաղակում ենք և մի և նոյն ժամանակ խոստովանվում ենք մեր գործի իսկ դրութիւնը, բացատրում ենք մեր կարևորութեան բուն աղբիւրները։ Բայց իզուր է անցնում մեր բոլոր աղերսանքը. մեր բոլոր հառաչանքը ոչ մի արձագանք չէ գտնում նրանց սրտերի մէջ, ընդհակառակը նրանք մի տեսակ չար հայացքով ձեռները մեկնում են դէպի իրանց կանտորայի սեղանը, իրանց սեփական այն թեթև նաւթի «օրինակը» վեր առնելու, որը սկզբում ցոյց էին տուել մեզ և ասում են «այ նայիր զրադուսին, մենք մի տեսակ նաւթ ունենք...» բայց մեր նիւթամոլ նաւթավաճառները յիշատակված լճակների նաւթը մի չնչին փողով գնում են և խառնելով իրանց թեթև նաւթին, այնպէս բարձում են մեր անզօր մէջքին։

Մէկ էլ եթէ նաւթի պահանջը աւելանում է, այն ժամանակ մեր պայմանախօսութեան համեմատ մեր օրեկան պահանջը չեն լրացնում մեզ։ Օրինակ, խօսած ենք օրեկան 15—20 հազար պուդ ստանալու, մեզ տալիս են օրեկան 6—8 հազար պուդ, աւելորդ պուդերը վաճառում են այն մարդկանց, որոնք պուդին $^1/_2$—1 կոպ. աւելի են վճարում մեզնից։ Զը նայելով որ մի կողմից լճակների նաւթի անպիտանութիւնից չենք կարողացել նաւթը իր ժամանակին ընդունել ու ծառայացնել մեր գործարանում, և միւս կողմից էլ իսկ ինքը, բարեխիղճ վաճառականը իր մոլի շահերի պատճառով նաւթը չէ տուել մեզ, սակայն յանկարծ նայում ենք, որ մեր նրանց տուած ձեռացաղիրը (որի ժամանակ լրանում է), կամ Նոտարիուսի մօտ է բողոքվում անպատուելով մեր վարկը այլ արհեստի վաճառականաց մօտ, և կամ ուղղվում է հաշտարար դատաւորի դիւանատունը, պահանջելով պարտամուրհակի փողը լիովին։

Նաւթանցուցիչները (нефтопроводникъ) որոնք «Բալախան» անուանված նաւթահանքատեղերից մինչև «Սև քաղաք» (Чорный городъ) անուանված նաւթագործարանատեղը շարադասել են 4—6 դիւմ լայնութեան երկաթեայ խողովակներ, շոգեկաթսայի շոգիի միջոցով թափում են Բալախանուց նաւթը (գիշեր ու ցերեկ 25—40 հազար պուդ ամեն մի շարադասված խողովակների միջոցով) ուղղակի նաւթագործարանների աւազանները (резервуаръ) Սև քաղաքում։

Մենք երբ որ գնում ենք նաւթավաճառից նաւթը, նրանից ստանում ենք տոմսակ (ярлыкъ), նոյն տոմսակը տանելով այս կամ այն նաւթանցուցիչների կանտորան, խնդրում ենք որ մեր գնած նաւթը (Բալախանից) իրանց խողովակների միջոցով թափեն մեր գործարանը և կանխիկ ստանան իրանց վարձը ևս։ Նոքա առաջ մի տեսակ նազ անելով մեզ պատասխանում են, թէ մենք էլ աւել ժամանակ չունենք մեր խողովակների միջոցով ուրիշին նաւթը հասուցանել, որովհետև մենք մեր խողովակի ոյժի հաւասարաչափութիւնը արդէն պայմանախօսել ենք այլոց հետ, կամ ասում են թէ՝ մենք նաւթ ունենք, եթէ կամենաք մեր նաւթը առէք ու այնպէս հասուցանենք, թափենք ձեր գործարանը։ Բայց այդ բարեխիղճ պարոնները մի այնպիսի պայման են առաջարկում մեզ, որ բոլորովին տարբեր է լինում մեր ամենատարրական պահանջներից։ Վերջապէս թէ մեր գնած նաւթն են ընդունում, թէ իրանց նաւթն են բարձում մեր մէջքին (մաղանդայից $^1/_2$—1 կոպէկ աւել) վերջացնում ենք մեր երկար ու բարակ խօսակցութիւնները հետևեալ կերպով։

Օրինակ. նա 30 հազար պուդ նաւթը պարտաւորվում է թափել (մի գործարան) 1 ամսում, օրեկան 1,000 պուդ և մի և նոյն ժամանակ 30 հազար պուդի խողովակի վարձը ստանում է կանխիկ։ Համաձայն մեր պայմանախօսութեան, նա սկսում է կատարել ճշդիւ—օրեկան հասուցանել 1,000 պուդը ուղիղ. բայց այդ տեսակ ճշդութիւնը չէ շարունակվում. 5—6 օրից յետոյ նայում ես որ էլ նաւթ չէ հասուցանում և կամ օրեկան հասուցանում է 3—4 հարիւր պուդ։ Այս դէպքում գնում ենք վիզներս կոռ. նրա կանտորան և յայտնում ենք մեր անբաւականութիւնը։ Նա, ինքնասէր վաճառականը, արդէն երազել է որ մենք պիտի գանք իր մօտ և պիտի բողոքենք մեր գործարանի մէջ պարապմունքի դադարման մասին, ուստի նա վաղօրօք շարադրում է մի կեղծ հեռագիր և այնպէս ուղարկում է Բալախանը իր այնտեղի կառավարչին, որ նա էլ յայտնի քաղաքի կանտորային—նաւթ չը թափելու պատճառը։ Կեղծ հեռագրի բովանդակութիւն էլ լինում է հետևեալը, «Շոգեկաթսայի, նաւթահանի (насосъ) կամ խողովակների վնասվելու պատճառով նաւթի թափելը պիտի յետաձգվի 3—5 օր»։ Այդ վաճառականը երբ մեզ տեսնում է իր կանտորայում թէ չէ—իսկոյն հասկանում է մեր մտադրութիւնը, վերցնում է սեղանի վրայից յիշատակված կեղծ հեռագիրը ու այնպէս ուղղում է դէպի մեզ առանց մի բառ անդամ խօսելու։ Մենք էլ միամտաբար երբ կարդում ենք ազնիւ վաճառականի հեռագիրը թէ չէ—լուռ ու մունջ, առանց մի խօսք անդամ արտասանելու վերադառնում ենք մեր գործարանը։ Բայց չը մոռանանք յիշելու որ ամեն մի նաւթանցուցիչ իր խողովակի մէկ ճիւղը տարել է մինչև ծովի ափ, ուր և այնտեղ էլ գլխաւորապէս թափում է նաւթը թէ առագաստանաւերի և թէ շոգենաւերի մէջ։

Հիմայ ինչ ենք տեսնում.—2—3 օրից յետոյ լցվում է այս կամ այն մարդի նաւը նաւթով. ինչու. որովհետև նաւարարը չտապում է շուտ

---

*) Կերօսին պատրաստելու համար նաւթի ծանրութիւնը—աստիճանը (градусъ) ինչքան թեթև լինի, նոյնքան օգտաւէտ է մեզ համար։—Օրինակ լաւ նաւթը 860—865 աստիճան է լինում (հաշուելով ջերմութիւնը 14% ստանում ենք շատ գոհացուցիչ %—իսկակ կերօսին 37—40%։

**) Հում նաւթը մնալով քանի մի չարաթ բաց օդում չքանում է նորա գազը—այն թեթև հեղանիւթերը, որոնցից գոյանում է կերօսինը, ուստի մենք նրան հաշուում ենք իբրև մնացորդ, մազութ, որ լինում է 895—905 աստիճանի և կոչում ենք, լճային նաւթ (озерная нефть) սրանից ստանում ենք կերօսին միայն 15—18%։

***) Մեզանից 8% հաղիւ թէ ստանում ենք նաւթը երկաթուղու նաւթակրակառքերի միջոցով. ինչու, այդ մասին կը հաղորդենք մի ուրիշ անգամ։

ուղևորվելու և մեզնից 1/2—1 կօպէկ աւել է վճարում պուդին: Կամ Բալախանիի լճակների նաւթը գնել է մի չնչին փողով նաւթավաճառներից և այժմս թափում է նաւերը փոխանակ մազութի (нефтяной остатокъ): Հէնց որ տեսնում ենք, որ այս ինչ վաճառականի խողովակներով է լցվել այս կամ այն նաւը, մենք անմիջապէս վազում ենք աղնիւ վաճառականի կանաչորան: Բայց ինչ ենք տեսնում. պարոնը կամ թաղնվում է իր տան մէջ (ծառան պատասխանում է թէ աղան տանը չէ) կամ բարեբաղդաբար պատահելուց էլ աչքերը գետնին դարձնելով հերքում է թէ իր չոգեկաթսան չէ բանում և ոչ մի նաւարարի նաւթ չէ ծախելու. կարելի է Կիրակոսեանի խողովակներով է լցվել և այլն:

Հիմա դադարել է մեր գործարանը—կերօսին այլ ևս չէ պատրաստվում. տեսնենք արդեօք դադարում է ևս նաւթավաճառը իր փողը մեզնից պահանջելու այն նաւթի համար, որը մնացել է նրա ամբարում, դադարում է պահանջել միւս վաճառականը, որից նիսիա գնել ենք նաւթը կերօսին պատրաստելու համար, կալաքար, (поташъ), արջասպ (купоросное масло), սոսինձ (клей) և տակառ մեզ հայթայթողները դադարում են արդեօք պահանջելու իրանց փողը, դադարել է միթէ մեր գործարանի ամսական հաշիվ վարձված մշակների, գործակատարների վարձի պահանջը, —որոնք շաբաթներով անգործ քնել են—և վերջապէս դադարել է միթէ իր պահանջները յայտնելու այն օտար վաճառականը, որը օրինաւոր դաշնագրութիւնով, մեծ տուգանքներով, գնել է մեզնից կերօսին և մենք այժմս անցրել ենք մեր պայմանի ժամանակակէտը: Ո՛չ. յիշատակված պահանջողները ամենայն խստութեամբ շարունակում են մեզնից իրանց արդարացի պահանջներն անել, նոքա երբէք չեն դադարում. բայց մենք.....

Աւելորդ չէ այստեղ յիշել ևս այն խայտառակութիւնը ու վերին աստիճանի լրբութիւնը, որ գործում են նաւթանցուցիչների գործակատարներից մի քանիսը:—Նոքա զիտութեամբ նաւթին 15—երբեմն 20% ջուր խառնելով թափում են մեր նաւթի աւազանները (резервуаръ), իսկ իրանք 15—20% նաւթը ծածուկ ծախելով, փողը ծառայեցնում են իրանց գրպանին:

Վերջացնելով մեր նամակը, կը պարտաւորվենք յիշատակված պարոնների պատէն ևս մի մի հայկական նաւթարձան կառուցանել «Բալախանի» լայնածաւալ հրապարակի վրա, թէ այլ ևս կը շարունակեն իրանց ազահ և խարդախ գործունէութիւնը:

Համոզված ենք որ մեր այս բողոքը ամեն մի մարդասէր անհատի սրտում արձագանք չը գտնի:

Ալ. Նաջարեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Օգոստոսի 1-ին

Թուրք Աբպեարի մի հայ աղջիկ փախցնելու գործը քննելու համար Գանձակից եկաւ մի նոր քննիչ: Թէ ինչ եղրակացութեան եկաւ յարգելի քննիչը, անյայտ է, միայն այսքանը գիտենք որ պրիստաւ Հասան-բէկը արձակվեցաւ պաշտօնից:

Մինչև այժմ մեր քաղաքի չարագործները անելը էին կրակ տալիս և գործի դժուարութեան պատճառով շատ անգամ բռնվում էին: Այժմ փողոցով անցնելիս չափարներն են կրակ տալիս, որտեղից և կպչում է տունը և այրվում: Մի շաբթվայ մէջ մի հայի և երեք թուրքի տան չափարը կրակ տուին: Այս էլ մեր քաղաքի արած յառաջադիմութիւնն է և նոր գիւտը:

Այսպիսի չորային տարի երբէք Նուխին չէ տեսած. ամբողջ երկու ամիս և կէս է, որ անձրև չէ գալիս: Եթէ ուրիշները չոքից են միայն նեղանում, մենք աւելի էլ նեղանում ենք ամբողջ շրջակայքը միանգամայն այրված ու չորացած տեսնելով: Խոտի գինը անչափ թանգացել է, բայց էլի հազար փառք, որ հացի գինը մեզանում լաւ արժան է: Ցորենի պուդը արժէ 66 կոպէկ., բրինձինը 1 բուբլի 30 կ., գարին 40 կ. պուդը: Քաղաքի փողոցների լուսաւորութեան համար նշանակված է տարեկան 975 բուբլի, բայց միայն փողը ծախսվում է. լուսաւորութեան անունը կայ, ինքը չը կայ: Ցանկարծ կը տեսնէք փողոցային լապտերները սարդի ոստայնով շրջապատված, ամբողջ ամիսներով չեն վառում. ինչու,—ապակին կոտրվել է: Կարծես թէ փարիզից են բերել տալու ապակին. իսկ վառած լապտերների լոյսը այնքան աղօտ է, ապակին այնքան կեղտոտ, մխոտ, ծխոտ, որ դիշերները դրանց գտնելու համար հարկաւոր է ձեռքին ճրագ ունենալ, քթին ակնոց. այլապէս չէք տեսնի:

Սպանութիւնները, արիւնհեղութիւնները այս վերջին ժամանակները խիստ սաստկացել են մեզ մօտ: Կը բաւականանամ յիշելով գոնէ 10 օրվայ մէջ պատահածները: Երկու թուրք վիճում էին միմեանց մէջ, ամեն մէկը պարծենում էր իր արած սխրագործութիւններով. մէկը յուսահատ կտրում է միւսի խօսքը. «Ինչպէս ես յանդգնում խօսել, գիտես որ քո հօրդ ես եմ սպանել:» Երկրորդը ընդմիջում է «դու որ իմ հօրս ես սպանել, ես էլ քեզ կը սպանեմ» ասելով, դաշոյնի հարուած է տալիս իր խօսակցին և սպանում նրան: Երկրորդ օրը, մութը նոր սկսած, մի թուրք էլ խփում է ատրճանակով և վիրաւորում է մի ուրիշ թուրքին: Երրորդ օրը մէկն էլ խփում է դաշոյնով միւսի ականջը կտրում. մի ևնոյն օրը երկու երեխայ սկսում են մի հասարակ կռիւ, կռիւը ընդհանրանում է, մինչև երկու հարիւր մարդ են հաւաքվում, քարերը կարկուտի պէս էին թափվում գլխներին: Երկու օրից յետոյ մէկը իր դաշոյնը խրում է միւսի փորը և սպանում:

Նուխու հոգևոր ուսումնարանը յոյս ունենք առաջիկայ տարուանից վերականգնվի: Թեմական վերատեսուչը խոստացել է նոր ուսուցիչներ բերել Թիֆլիսից, հեռացնելով եղածները: Ցանկանում ենք յաջողութիւն պ. վերատեսչին:

Քաղաքից 3 վերստ դէպի հիւսիս սարի լանջի վրա գտանվում է Գիս պատմական աւանը ս. Եղիշէի վանքով. մի ժամանակ սա մեծ ուխտատեղի էր: Կաթողիկոսը և մի քանի եպիսկոպոսներ էին կենում այդտեղ: Հայ թէ թուրք մեծ պատկառանքով էին յիշում դրա անունը. այժմ այս վանքը դարձել է Նուխեցի հայ, թուրք և ռուս աղքատաբնակութեան քէֆի կենտրոնը: Ահագին խմբերով Նուխեցիք ամեն օր գնում են Գիս «քէֆ անելու», ոչխարները առաջն արած, գինու տակերը էշերի վրա բեռնած: Սաղն ու թառը, դափն ու զուռնան նաղարի ձայնակցութեամբ, չքեաստի և մուխամբազի ներդաշնակութեամբ, խաղերի կլկլոցը, բերանի սուլմունքը, արինդի դայլայլմունքը թնդացնում են օդը: Եթէ ամենաուռաղը օրական հաշվենք 45 բուբլի, ամառվայ 4 ամսվայ մէջ ուրեմն Նուխու հայերը միայն Գիսում ծախսում են 5,000 բուբլից աւելի քէֆի համար: Իսկ ուսումնարանի համար մի տարվայ մէջ ծախսում են 800 բուբլի և այդ գումարը շատ մեծ է երևում նրանց համար ու շատ ծանր թվում:

* * *

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Շամախի, 27 յուլիսի

Շամախու երկսեռ զպրոցաց մատենադարանի վարչութիւնը ուղարկելով խմբագրութեանդ նոյն մատենադարանի մտից, ծախուց և պրեանց հաշուեցուցակը, խոնարհաբար խնդրում է ապագրել նորան «Մշակ» լրագրիդ ներկայ համարներից մէկում:

Առ 1-ն յունվարի 1881 ր. Մատ. ունէր առ ձեռն պատրաստի դրամ 539 ր. 75 կ., յընթացս նոյն ամի եղել են մուտք 77 ր. 42 կ., որ կազմում է ընդամենը 617 ր. 17 կ.: Յընթացս նոյն ամի եղել են ծախք լրագրաց և մանր ծախսերի 77 ր. 46 կ. այս ծախսն հանելով գումարից, մընում է առ ձեռն պատրաստի դրամ 539 ր. 71 կ. սոյն գումարի մէջ մտնում է 1 հատ. ա. փոխառնութեան տոմսակ արժողութեամբ 236 ր. 50 կ., 6 հատ սերի տոմսակներ արժ. 300 ր., 50-ական ր., իրաքանչիւրը. պատրաստի դրամ 3 ր. 21 կ.: Առ 1-ն յունվարի 1881 թ. Մատ. ունէր 721 հեղինակութիւնք 2292 գրեանցով, արժ. 1601 ր. 3 կ., յընթացս նոյն ամի աւելացել են ընծայաբերութեամբ 22 հեղ. 48 գրեանցով, արժ. 9 բուբլու. ուրեմն առ 1-ն յունվարի 1882 թ. Մատ. ունէր 743 հեղ. 2340 գրեանցով, արժ. 1610 ր. 3 կօպէկի: Յընթացս նոյն ամի Մատ. վերցրած են գրեանք տանը կարդալու—401 անգամ:

Գործակատար Մատենադարանի
Գ. Կաճկաճեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՍԻՄՖԷՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են: «Յուլիսի 28-ին գանձակեցի պ. Սարդարեանց հիւր գտնվելով մեր քաղաքում, տուեց մի թատրօնական ներկայացում հայերէն լեզուով, յօդուտ մեր հայոց ուսումնարանի: Խաղացին «Վարդանանց պատերազմ» պիէսան: Պարոնը քսան օրվայ մէջ պատրաստեց երիտասարդ սիրողներին: Ներկայացումն շատ լաւ անցաւ: Թատրօնական այդ ներկայացումից արդիւնք եղաւ 397 բուբլ: Հոգաբարձութիւնը շնորհակալութիւն յայտնեց պ. Սարդարեանցին: Հասարակութիւնը խնդրում է որ պ. Սարդարեանց դարձեալ մի ներկայացում տայ: Լսել ենք որ երկրորդ ներկայացմանը կը խաղան «Շուշանիկ» ողբերգութիւնը: Այդ պիէսայում կը մասնակցեն պ. Սարդարեանցի կինը և քեռին, որ նրա հետ են ճանապարհորդում:»

—

Պ. Աբել Ապրէսեանց ԲԱԳՈՒԻՑ, խնդրում է մեզ տպել հետևեալ տողերը: «Խոնարհաբար խնդրում ենք այն անձանց, որոնք գիտում են մեզ շարունակ «Խենթ» գրքի մասին, գիտել ուղղակի Շուշի, պ. Յակոբ Մուսայէլեանցին, եթէ պահանջը գրքի մի քանի հատ է միայն: Իսկ ինձ մօտ եղած այդ գրքերից բոլորը վաճառված են արդէն: Մուսայէլեանցի մօտ ես թողել էի 50 հատ յիշեալ գրքից և չեմ կարծում որ նա բոլորն էլ վաճառած լինի, նոյնպէս 10 հատ կայ Շամախում պ. Էմմանուէլ Փիրբուդաղեանի մօտ. ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի գտնել:»

—

Պ. Աբել Ապրէսեանց խնդրում է մեզ տպել և հետևեալը: «Իմ ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀաշուապահութԵԱՆ գրքոյկի բաժանորդագիրներ ունեցողներից խնդրում եմ անմիջապէս հաղորդել ինձ բաժանորդների անունները, գրքոյկի մէջ տպագրելու համար: Իսկ «Խենթ» գրքի ծախվելուց զանազան անձանց վրա մնացած ապառիկները, եթէ կարելի է, խնդրում եմ ուղղակի իմ հացէով ուղարկել: Իմ հաշիս ուրիշին տուած փողը ես չեմ ընդունում:»

—

ՓՕԹԻՑ մեզ գրում են: «Պ. Կարապետ Պօպով, որ արդէն յայտնի է իր առատաձեռնութեամբ, խոստացաւ 500 ր. տալ տեղիս հայոց եկեղեցու վերանորոգութեան համար: Բացի սորանից պարոնը գիտաւորութիւն ունի իր հաշով ուղարկել Կ. Պոլիս վեց հոգի ձայնաւոր տղաներ, այնտեղ երգեցողութիւն սովորելու համար, որպէս զի վերադարձին մեր քաղաքի եկեղեցում երգեն:»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են հետևեալը: «Մեր գաւառի Բում աւանը ունի շատ ընտիր և առողջարար հանքային ջրեր, որոնք խիստ զօրաւոր կերպով օգնում են ջղային և այլ հիւանդութիւնների առողջանալուն: Այս տարի Նուխու, Արէշի և Դաղստանի վիճակներից այնքան հիւանդներ էին եկել, որ Բում աւանը մի մեծ քաղաքի էր փոխվել: Այս վերջին ժամանակները Բաքուից, Շամախուց և Թիֆլիսից էլ շատերը եկել էին այս հանքային ջրերից օգտվելու համար:»

—

Ստացանք ԹԻՖԼԻՍԻ հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի կողմից հետևեալ նամակը: «Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ընդ սմին ուղարկելով ձեզ ընկերութենից հիմնվելի Ապաստարանի ծրագիրը և ընկերութեան գումարների մտից և ելից երկու հաշիւ, պատիւ ունի խոնարհաբար խնդրել ձեզնից, որ բարեհաճէք տեղ տալ նոցա «Մշակի» մերձակայ համարներից մէկում:»

—

Կատարելով հայոց Բարեգործական ընկերութեան խնդիրքը «Մշակի» հետևեալ համարում կը տպենք «Ապաստարանի նախագիծը» որ մշակել է ընկերութեան խորհուրդը: Ընկերութեան ընդհանուր ժողովը վճռել էր նախ տպագրել տալ այդ նախագիծը, հասարակական կարծիքի և մամուլի քննութեանը նրան ենթարկելու համար և ապա ներկայացնել օրինական վաւերացմանը: Այդ նախագիծը տպագրելուց յետոյ, մենք «Մշակի» հետևեալ համարներից մինում կը յայտնենք նրա մասին մեր կարծիքը:

—

Ստացանք Վիէննայից պ. Ֆ. Սալլի հրատարակած ֆրանսերէն «Արևելեան» լրագրի առաջին համար: «L'Oriental» լրագիրը շատ չնորհալի տեսք ունի և առաջին համարը շատ լաւ է կազմված: Խորհուրդ ենք տալիս հայերին գրվել այդ լրագրին: Պայմանների մասին տեսէք «Մշակի» չորրորդ երեսի վրա, յայտարարութիւնների բաժնում: Նոր լրագիրը խօսում է և հայերի վրա, նուիրելով նրանց մի երկու յօդուածներն էլ: L'Oriental» դրել է իր ճակատին, որպէս նշանաբան երկու բառ: «Ազգութիւն և քաղաքակրթութիւն:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Անգլիայի մէջ մինիստրական կամ պարլամենտական դժուարութիւններին վերջնականապէս առաջն առնվեցաւ, գրում է „Голосъ": Իրլանդական ֆերմերներին ապառիկները ներելու վիճելի հարցի վերաբերութեամբ լօրդերի ժողովի, կառավարութեան և համայնքների ժողովի մէջ կայացաւ այն համաձայնութիւններից մէկը, որոնցով Անգլիայի մէջ վերջանում են այդպիսի դժուարութիւնները: Համայնքների ժողովը, ստանալով լօրդերի ժողովից 'ի նպաստ կալուածատերերի փոփոխված օրինագիծը ապառիկների ներման մասին, կառավարութեան խորհրդով և առաջնորդութեամբ լօրդերի ժողովին մի քանի պիջումներ արաւ, որոնք միասակար չեն ֆերմերների շահերին: Լօրդերի ժողովի պահպանողական անդամները, 'ի նկատի առնելով այն ահագին մեծամասնութիւնը, որով համայնքների ժողովը ընդունեց փոփոխված օրինագիծը, չը կամեցան շարունակել վէճը, չը նայելով մարկիզ Սալիսբիւրիի և նրա բարեկամների դրդումներին, որոնք կամենում էին մինիստրական դժուարութիւններ պատճառել: Մարկիզ Սալիսբիւրի ստիպված էր խոստովանել, որ իր սեփական կուսակցութիւնն անգամ իրան չը պաշտպանեց: Լօրդերը փոփոխված նախագիծը ընդունեցին մինչև անգամ առանց քուէարկութեան:

Գլադստոն շատ աշխատանքներ գործ դրեց այդ հետևանքներին հասնելու համար: Դրա փոխարէն նա այժմ յաղթող է հանդիսացել և զգում է թէ եգիպտական արշաւանքի վերաբերութեամբ, որ նրա գլխաւոր հոգսն է դարձել, ինքը գործողութիւնների կատարեալ ազատութիւն է վայելում: Ազատամիտ մինիստր-նախագահը սկսեց աւելի որոշ խօսել եգիպտական հարցի մասին: Լօնդօնի լօրդ-մերի տուած ճաշկերոյթի ժամանակ և համայնքների ժողովի մէջ Գլադստոն վերջին մի քանի օրվայ ընթացքում շատ հետաքրքիր բաներ ասեց: Մինիստրութեան առաջնորդը հաւատացած է, որ Եւրոպան այլ ևս ոչինչ արգելքներ չի դնի Անգլիայի ներգործութեանը Եգիպտոսի վրա: Նա այլ ևս հարկաւոր չէ համարում ծածկել, որ այդ ներգործութիւնը իր նպատակին հասնելուց յետոյ չի բաւականանայ վերականգնելով Եգիպտոսի մէջ „status quo ante": Արաբի-փաշայի ապստամբ զօրքերից անգլիացիների ձեռքով ազատված երկրի դրութիւնը պէտք է զանազանվի այն դրութիւնից, որի մէջ նա գտնվում էր մինչև Արաբի-փաշայի երևալը քաղաքական ասպարէզի վրա: Անգլիական կառավարութիւնը մտադիր չէ երկար ժամանակ դրաւել Եգիպտոսը իր զօրքերով նախ՝ այն պատճառով, որ դա հակառակ կը լինէր նրա սեփական շահերին և երկրորդ՝ դա համաձայն չէր լինի անգլիական կառավարութիւնից միւս պետութիւններին տուած խոստումներին: Այնու ամենայնիւ Գլադստոն ներկայ րոպէն շատ անյարմար է համարում մանրամասն բացատրութիւններ տալու համար անգլիական արշաւանքի նպատակների մասին: Նա միայն յիշեցնում է, որ Անգլիայի շահերը Եգիպտոսի մէջ անկարելի է համեմատել միւս պետութիւնների շահերի հետ, որովհետև անգլիական առևտրի համար փարաօնների երկիրը մի դուռ է, որ միացնում է երկրագնդի երկու մասերը:

Այս բոլորը ուշադրութեան արժանի է

և բաւականաչափ բացատրում է գործերի դրութիւնը: Եւրոպան այժմ գիտէ, որ Անգլիան, իր վրա առնելով եգիպտական արշաւանքի ծախսերը և աշխատանքները, մտադիր է յայտնի չափերով օգուտ քաղել իր ձեռնարկութեան պտուղներից: Սակայն Թիւրքիային իր հետ միասին գործել, նա ապահովեց այդ ձեռնարկութեան կատարեալ աջողութիւնը:

Քանի որ պայմանները այսպէս են, Եւրոպային ոչինչ չէ մնում անել, եթէ ոչ չէզոքութեամբ սպասել անցքերին, պատրաստվելով պաշտպանել իր սեփական շահերը, եթէ Անգլիան կը փորձէ նրանց վնաս հասցնել: Կոնֆերենցիայի մէջ աւստրիական հաւատարմատարը արդէն յարուցեց հետաքրքրական հարցը. արդեօք լաւ չէր լինի դադարեցնել կոնֆերենցիայի նիստերը մինչև այն ժամանակ, երբ անգլիական զօրքերը վը վերջացնեն իրանց գործը: Միայն աւստրիական կառավարութիւնը չէ, որ կոնֆերենցիայի նիստերի ժամանակաւոր դադարումն ամենալաւ միջոց է համարում այն անվայել դրութենից դուրս գալու համար, որի մէջ ընկել է եւրոպական դիպլոմատիան: Շատերը մինչև անգամ ենթադրում են, որ Աւստրո-Ունգարիայի բարեկամ պետութիւններից մէկը խորհուրդ է տուել նրան այդպիսի յայտնութիւն անել: Զարմանալի չէ ուրեմն, որ կոնֆերենցիան վճռեց ժամանակաւորապէս դադարեցնել իր պարապմունքները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 31 յուլիս

Եգիպտոսի այժմեան կարևոր անցքերն մեր ուշադրութիւնն այն կողմը դրաւելով բնականապէս Գահիրէի մէջ գտնուող հայերն այս միջոցիս ինչ վիճակի մէջ ըլլալն փափաքող եմք իմանալ: Այս մասին Կ. Պոլիս հասած լուրերն յոյժ տխրալի են և միանգամ ևս կուգան մեզ ցոյց տալու՝ թէ հայը ո՛ր տեղ որ գտնուի, ո՛ր կլիմայի հետև որ բնակի՝ միշտ իր մէջ անտարբերութիւն, թոյլութիւն, երկպառակութիւն և սարկական հոգին կը տիրապետեն: Նա չըներ ջանք որ իր գտնուած միջավայրէն փոքր ինչ աւելի բարձրանայ և գիտակցութիւն, աղդեցութիւն ձեռք բերէ, որով և դառն ճգնաժամերու մէջ իր փրկութեան միջոցներն կարողանայ գտնել առանց ուրիշի օգնութեան:

Գահիրէի մէջ մօտ երեք հազար հայ ժողովուրդ կայ, ուր երկար տարիներէ ի վեր հաստատուած է: Անոնց մէկ մասը բնիկ կարող են համարուիլ, բայց շատերն Եգիպտոսի կէս անկախութենէն, Մէհմէդ-Ալիի ժամանակէն ի վեր գաղթած են այստեղ, թէ Կ. Պոլսէն, թէ Զմիւռնիայէն և թէ Փոքր-Ասիոյ այլ և այլ քաղաքներէն: Քառասուն տարիէ ի վեր Եգիպտոսը եւրոպացւոց համար Աւետեաց երկիր մը եղած է: Հաղարներով մարդիկ գնացեր են այնտեղ անօթի և բոկոտն և դարձել են հարուստ, զարգացած: Կառավարութեան գործերու մէջ աղդեցութիւն ձեռք բերած են, երկրին զարգացման նպաստած են, մեծամեծ չէնքեր, եկեղեցիներ, ուսումնարաններ, հիւանդանոցներ, որբանոցներ հաստատած են: Ցոյներն ալ մեծ բազմութեամբ գաղթած են այդ արդաւանդ երկիրն և այսօր, այսինքն մինչև ներկայ յեղափոխութեան ժամանակ, հազարաւոր վաճառաշահ տուներ ունեն անոնք Եգիպտոսի ամեն մէկ անկիւնը, վարկավայել սեղանաւորներ կան այդ աղդէն, անհուն կալուածներու տէր եղած են յոյնք և մասնաւորական զարգացման մասին եւրոպացիներէն ոչ նուազ յառաջադէմ են: Թէ եւրոպացիք և թէ յոյնք կարելի է իսկզբան իբր բաղդախնդիրք ոտք կոխեր են Եգիպտոսի հողի վրայ, բայց նոքա բաւական խելք, ճարպիկութիւն ունեցեր են մէջերնին համերաշխ մնալու և գտեր են այն բաղդը և յառաջադիմեր են:

Իսկ հայը, որ ուրիշներէ ոչ սակաւ բաղդախնդիր է, գնացեր է այնտեղ նոյնպէս բաղդ որոնելու, բայց տանելով իր հետ իրմէ անբաժանելի այն ամեն մոլութիւններն, բարոյական ապականութեան, անմիաբանութեան ոգին, որք ամեն ջանք ապարդիւն կընեն և ամեն յաջողութեան դուռները կը փակեն մարդուս առաջ: Այնպէս որ քառասուն տարիէ ի վեր Գահիրէի հայերուն ստուար մեծամասնութիւնը մնացեր է ինչ որ էր այն ժամանակ, այն է տգէտ, աղքատ, կռուասէր և սարսուկ: Եթէ եգիպտաբնակ հայոց մէջ երևան եկած են երբեմն քանի մը անձնաւորութիւնք որք յիշուած են, նոքա բացառութիւններ են և նոցա անուններն մատերնուս վրայ կարող եմք հաշուել: Այդպիսի անձնաւորութիւնք ամեն կողմ և ամեն ժամանակ երևան կուգան: Պօղոս Պէյ, Արթին Պէյ, Նուպար բաշա, Տիւրրի էֆէնտի և այլք, նոյնպէս մէկ քանի վաճառականք և կալուածատէրք որք կան այժմ, ապացոյց չեն բնաւ այն տեղի հայ հասարակութեան զարգացած վիճակի մը մէջ ըլլալուն և եթէ ճշմարիտը պէտք է խօսել, բոլոր այդ անցեալ և ներկայ անուանի հայերն աննշան են մեզ համար ազդային տեսակէտով, քանի որ նոքա կարող էին շատ բան ընել այնտեղի հայոց նիւթական և բարոյական զարգացմանը համար և ոչինչ են ըրեր:

Վերջի արկածներուն պատճառաւ Եգիպտոսէ Կ. Պոլիս եկած արժանահաւատ անձանց հետ կը խօսինք շատ անգամ Գահիրէյի հայոց վիճակին վրայ, որ Եգիպտոսի ամեն քաղաքներէ աւելի հայ կը պարունակէ: Ամենքն կը վկայեն թէ այնտեղի հայերն, գրեթէ ամենափոքր բացառութեամբ, խեղճ, ողորմելի և յետադէմ են: Եկեղեցիներն անշուք, վարժարանն անկարգ, բարոյականութիւններն աւերած, նոքա բնիկ խաժամուժին հետ խառնուած են բոլորովին չունենալով որ և է առնչութիւն քաղաքականացեալ դասուն հետ: Շարունակ կուսակցութեանց բաժնուած՝ մէկզմէկ անխնայ կը հալածեն և կամ ամենքը միասին մէկ երկու աղդեցիկ հայերէ կը կեղեքուին: Ազգային կալուածոց եկամուտներն կը կողոպտուին չարունակ, նոյն իսկ առաջնորդին ձեռքը, և հասարակութիւնը այնքան թմրած, ստրկացած է որ չէ կարող իր իրաւունքներն պաշտպանել: Գահիրէ, կըսէր մեզ երէկ այս օրերս անկէ վերադարձող մի բարեկամ, երկու տարբեր դաս բնակիչ ունի: Մէկը քաղաքակրթեալ, դիւրակեցիկ և պարկեշտ, միւսը կոպիտ, կեղտոտ, և կատարեալ վայրենութեան մէջ ընկղմած: Այս վերջին դասին կը պատկանին, կը յարէր, նաև այնտեղի հայերն որք ֆելլահէն, ղփտիէն, խաիշիկէն գրեթէ տարբերութիւն չունեն թէ իրենց ներքին կեանքի մէջ և թէ ընկերական կենցաղին:

Երբ վերջին հալածանքներն սկսան քրիստոնէից դէմ, դիտեցինք որ ամբողջ 2—3000 հայու մէջէն որք միայն Գահիրէ կը գտնուին, հազիւ երեսուն հոգի նիւթական կարողութիւն ունեցեր են առ ժամանակեայ կերպով հեռանալու այդ հիւրամերժ երկրէն: Միւսներն բոլորն ալ մնացեր են այնտեղ, ամեն՝ ի սիրտ սպասելով որ իրենք ալ միւս զոհուած քրիստոնէից կարգն անցնին: Այնտեղ այդ թշուառներն սարսափած, անօթի են, և ո՞վ գիտէ ինչ պիտի ըլլայ իրենց վիճակն եթէ երկար ամիսներ տակաւին տիրէ այդ անիշխանութիւնն: Իրաւ է որ հայերն ալ ուրիշներուն հետ միացեր են Արապին տէր և փրկիչ հռչակելու համար—(հայը միշտ աւելին կոթին կողմը կանցնի—), բայց այդ ճարպիկ միջոցն ոչ ազազային ջարդէ մը կարող է զանոնք ազատել և ոչ ալ պատառ մը հաց տալ քաղցածներուն: Բնական էր որ իրաց այս վիճակին մէջ աստ ու անդ պիտի դիմէին դարձեալ, ինչպէս և դիմեցին ալ:

Մենք անհոդ եմք միշտ մեր զարգացմանն աշխատել, մեր հաւաքական շահերն պաշտպանելու անփոյթ եմք ամեն ատեն և երբ նեղը կը մնանք, վնաս չի կայ. կը գնանք չորս կողմ մուրալու: Հարկաւ մեզ օգնող մը կը գտնուի:

Գահիրէի մէջ մէկ քանի հայ հարուստներ կան կըսեն, բայց այսպիսի ծանր և դժուարին պարագայի մը մէջ անոնցմէ ո՛չ մէկը դեռ մէկ փարա օգնութիւն ըրած է իր խեղճեալ հայրենակիցներուն: Այս վերջիններն անոնցմէ յուսահատ՝ այստեղի սովելոց մասնաժողովին դիմեցին, այն սովելոց մասնաժողովին որ այսօր իր մնդուկին մէջ 8,000 օսմանեան ոսկիէն աւելի փող ունի և որ առանց տոկոսը վրան բարդուելու կը մնայ: Այն մասնաժողովն շատ օրեր աղերսել տալէ վերջը, հուսկ ուրեմն իր բարձր առատասրտութեամբը բարեհաճեցաւ 100 ոսկի յուղարկել Գահիրէ, 2,300 ֆրանք միայն, ճիշդ երկու օրուան ուտելիք: Զը գիտեմք թէ այդ մասնաժողովը ինչ յարմարագոյն առիթի կը սպասէ իր պիտանութիւնը ցոյց տալու համար: Գոնէ այդպէսով արդարացնէր իր հաչիւ չիտալն և ազդին կարօտելոց օգտին համար միայն իր մնանջենաւորելն:

Միւս կողմէն լրագիրներն երևան հանեցին որ ճարտարապետ Զենոբ անուն մէկը յաջողեր է Գահիրէ գտնուած ժամանակը այնտեղ ազդային մնդուկէն 400 ոսկի ձեռքը անցունել, իբր աւանդապահ: Արդ՝ Թիւրքիոյ մէջ գիտենք թէ ինչ ըսել է «աւանդապահ» բառը: Սա մի զրպան կը նշանակէ, որու մէջ ազդին ընդհանրութեան մէկ ստակը մտնելէ վերջը յաւիտեանս դուրս չելներ: Այդ Զենոբ ճարտարապետն ալ, որ երևի իր տունը միայն չմնել լաւ գիտէ, փոխանակ այդ դումարը այնտեղ ձգելու որ կարօտեալներուն վիճակին օգնութիւն ըլլայ, դայն ծոցը դրած պօլիս ապաստանած է այժմ: Օրագիրները այս գործը երևան հանեցին և բողոքեցին, պատրիարքարանը ստիպեց այդ անխիղճ արարածը որ գտնէ այդ դումարին մէկ մասը յուղարկէ Գահիրէի խեղճերուն, մինչև այս օրս նա չէ հաճեր զատուիլ այդ ստակէն: Որուն պէտք է դիմել, ինչ պէտք է ընել այս աստիճան անգութ գործիչները, աղքատին ստակը կողոպտողները պատուհասելու համար: Դատ բանալ: Ցարիներու կարօտ է ազդին իրաւունքը ձեռք բերելու համար, եթէ երբէք ձեռք բերուի: Այդ անձը անվրդով և հանգիստ Պոսփորի եղերքներն ժուռ կուգայ այժմ, երկար բանակցութեանց մէջ կը մտնէ վարչութեան հետ, ամեն միջոց, ամեն պատճառանք ձեռք կառնէ ստակն իր մօտ պահելու համար և այն միջոցին, ո՞վ գիտէ, քանիներն անդին սովամահ կլլնան:

Ե՞րբ մեր հայերը պիտի սովորին արժանաւորներու յանձնել իրենց հաւաքական գործերը: Մինչև երբ մեր մէջ ասպարէզ պիտի գտնեն անխիղճ չահամոլներն, վաճառուած ստրուկներն և անպատկառ աւազակներն:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայից հեռագրում են «Новое Время» լրագրին որ անգլիացիները կալանաւորեցին մի լրտես, որ իր հետ ունէր նշանաւոր թղթեր: Այդ թղթերից անգլիացիները համոզվեցին, որ Եգիպտոսի խեդիվը, որ առ երես Արաբի-փաշայի թշնամի էր ձևացնում իրան, ամբողջ ժամանակ գաղտնի կապեր և յարաբերութիւններ էր պահպանում Արաբիի հետ:

—«Новости» լրագրին հեռագրում են որ Թիւրքաց կառավարութիւնը թոյլ տուեց ռուսաց չոգենաւին, որ գնում է կործանված «Մոսկվա» չոգենաւի վրա գտնված ճանապարհորդներին բերելու համար, անցնել Թիւրքիային պատկանող ծովի անցքերով:

—Խեդիվը իր հրովարտակով յայտնում է Սուէզի քաղաքական և զինուորական իշխանութիւններին, որ անգլիացիները լիազօրութիւն ունեն դրաւել Սուէզեան ջրանցքի բոլոր կէտերը և հրամայում է չընդդիմանալ անգլիացիների գործողութիւններին: Այդ հրովարտակը յայտնված է և Լբսէպսին:

—Բէյրութի մէջ կալանաւորված են 25 անձինք: «Nordd. Allg. Zt.» լրագիրը լսել է որ Բ. Դուռը Սիրիայում կարգը վերականգնեցնելու պաշտօնը յանձնել է այդ երկրի նահանգապետին: Սիրիայում ժանդարմների և ոստիկանների թիւը շատացրած է:

—Արաբական «Էլ Ավայիբ» լրագիրը հաղորդում է որ Բ. Դուռը գաղտնի կերպով յայտնել է Արաբի փաշային, որ եթէ նա կը խոնարհվի Թիւրքիայի հրամանների առջև, նա ներված կը լինի, իսկ հակառակ դէպքում նա խստութեամբ կը պատժվի:

—«Բէյտերի գործակալութեանը» հաղորդում են որ անգլիական հնդկական զօրքերը արդէն հասան Եգիպտոս: Անգլիացիները ամրացան Մէկսի մէջ: Գնդապետ Թէրար մի շատ աջող հետախուզութիւն արաւ թշնամիների ամրացած դիրքերի:

—«Русскій Курьеръ» լրագրին գրում են Բերլինից որ Բէնինդսէնի ճառից յետոյ, որ նա արտասանել է Կէօշնի մէջ, Գերմանիայի բոլոր ազատամիտները հասկացան թէ որքան անհրաժեշտ է միանալ առաջադիմական կուսակցութեան հետ: Առաջ նացիոնալ—լիբերալները քուէարկում էին պահպանողականների համար, իսկ այժմ, պրուսական լանդտագի նոր ընտրութիւններին պատրաստվելով, ազատամիտները և առաջադիմականները ընդհանուր կանդիդատներ կունենան: Գերմանիայի ազատամիտ կուսակցութեան բոլոր ճիւղերը, որոնք մինչև այժմ բաժանված էին միմեանցից, կազմել են այժմ ընդհանուր ազատամիտ դաշնակցութիւն:

—«Բէյտերի գործակալութեանը» Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 4-ին, որ երէկ երեկոյեան այստեղ հասաւ Վուլվիչ 10,000 մարդկանցով:

—Լրագիրներին Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 3-ին: Դիլկ յայտնեց, որ պատերազմական դաշնագիրը Թիւրքիայի հետ դեռ ևս կապված չէ: Աշէ յայտնեց, որ կառավարութիւնը վճռեց, թէ կարելի է վերադարձնել զուլուսների թագաւոր Սետեվայօին թագաւորական գահը մի քանի պայմաններով: Լորդ Կէմբէրլէյ այսօր առաւօտ տեղեկացրեց այդ բանի մասին Սետեվայօին: Լորդերի ժողովում Գրէնվիլ հաղորդեց, որ կառավարութիւնը պատերազմական նաւ ուղարկեց Բէնդալ, երբ եւրոպացիների սարսափելի երկիւղի մասին լուր ստացաւ: Ներկայ բոպէում ոչինչ հիմք չը կայ վախենալու մեծ-բրիտանական հպատակների ապահովութեան համար:

—Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 4-ին: Համայնքների ժողովը առանց քուէարկութեան մերժեց Բարտլէտի առաջարկած պախարակումն եգիպտական քաղաքականութեան համար: Վիճաբանութիւնների ժամանակ Դիլկ յայտնեց, որ անգլիական կառավարութեան յարաբերութիւնը Գերմանիայի և Աւստրիայի հետ երբէք այնքան լաւ և բարեկամական չէ եղել, որքան այժմ: Կառավարութիւնը ուրախանում է Գերմանիայի սրտակից յարաբերութիւնների համար, որը ամենանկեղծ կերպով պաշտպանում էր անգլիական քաղաքականութիւնը, որի համար Անգլիան յայտնում է իր երախտագիտութիւնը: Ճշմարիտ չէ այն լուրը, որ իբր թէ ինքն, Դիլկ, աշխատում էր դաշն կապել Ֆրանսիայի հետ Գերմանիայի և Աւստրիայի դէմ: Անգլիան ոչինչ հիմք չունէ նախանձել Գերմանիայի աղդեցութեանը Կ. Պոլսում: Նոյնպէս ուղիղ չէ, որ իբր թէ չորս պետութիւնները դաշն են կապել Անգլիայի դէմ Սուէզեան ջրանցքի վերաբերութեամբ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կայմանի խորամանկութիւնը: «Courrier des Etats-Unis» լրագրի խօսքերով, եւրոպացիների մեծամասնութիւնը Պանամայի պարանոցի վրա հրապուրվում է կայմանի, կամ ամերիկական կոկորդիլոսի որսով: Համարեա բոլոր եւրոպացիները, որոնք այցելում են այդ երկիրը, պարտաւորութիւն են համարում տանել իրանց հետ եթէ ոչ կայմանին, գոնէ մի որ և է յիշատակ որսորդութեան մասին: Բոլոր համարձակ Ներրովթներից միայն մի քանիսին է աջողվում ներկայ գտնվել այդ սարսափելի ծոյլերի ճաշին: Շատ մօտ չը մերձենալով նրանց, և գիտակի օգնութեամբ կարելի է տեսնել, թէ ինչպէս նրանք շարքով պառկած են աւազի վրա: Նրանց բերանը բաց է և կարծես քարացած է այդ դրութեան մէջ: Ճանճերը և թեւաւոր միջատները թռչում են այդ բերանի չորս կողմը, և մտնելով բերանը նստում են ու սկսում են ծծել արիւնը: Միջատները արդէն մեծ բազմութեամբ հաւաքվել են, բայց բերանը բաց է մնում: Վերջապէս, նրա բերանի բոլոր նեղքին մասը սնանում է թռչող միջատների լեգէօններից,—այդ ժամանակ սպանելն արդէն աւելորդ է: Լսվում է մէկ չոր ձայն, և երկու ծնօտները յանկարծ փակվում են: Կայմանը միանգամից կուլ է տալիս հաղարաւոր զոհեր: Յետոյ բերանը կրկին բացվում է և մի քանի ժամանակ անցնելուց յետոյ նոյն պատմութիւնն է կրկնվում: Այդպիսով այդ կենդանիները իւրաքանչիւր օր կուլ են տալի ճանճերի և թռչող միջատների ահագին թիւ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 օգոստոսի: „Врачъ“ լրագիրը հաղորդում է, որ զինուորական շրջանների մէջ կարգադրութիւն է արվ ընդունել զինուորական-բժշկական ակադեմիաների մէջ իբրև ուսանողներ և ծառայութեան մէջ իբրև բժիշկներ հրէաներին բժիշկների ընդհանուր թվի 5% ոչ աւելի և այն էլ յայտնի տեղերում Օդէսայի, Վիլնայի, Վարշավայի, Կիեվի, և Խարկովի շրջաններից: Հրէայ բժիշկների աւելորդը

տեղափոխել այլ շրջանները երկու տարվայ ընթացքում: Բարձրացնել ծառայութեան մէջ հրէայ բժիշկներին մինչև հինգերորդ կարգի աստիճանները, այն էլ զինուորական շրջանների կառավարիչների համաձայնութեամբ: „Голосъ“ լրագիրը օգոստոսի 10-ից հաղորդում է, որ բարձն Շուէյնգելին թոյլ է տրված իր հաշվով մի տարվայ ընթացքում հետախուզութիւններ անել երկաթուղու համար Բոստովո-Վլադիկավկասեան գծից դէպի սև ծովը երկու ուղղութիւններով Տիխորեցկայա կայարանից մինչև Նովորոսիյսկ եկատերինոդարի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50 կ., չորրորդ 90 ր. 25 կ., հինգերորդ 90 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 215 ր., երկրորդ 213 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 75 կ., երկրորդ 89 ր. 75 կ., երրորդ 89 ր. 75 կ., ոսկի 8 ր. 23 կ.: Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,09 պէնս, Ամստերդամի վրա արժէ 122 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ, Փարիզի վրա արժէ 254 ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը ամուր է:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԱՐԴԱՀԱՆ Ս. Վ. Ներեցէք եթէ ձեր 3 բուբլ ձեզ կրկին կը դարձնենք: Մենք դժբաղդաբար, ժամանակ չունենք գրքեր կամ որ և է այլ բան առնելու յանձնարարութիւններն ընդունելու:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, որ ներկայ օգոստոսի 18-ին առաւօտեան 12 ժամին վարչութեան ներկայութեամբ կը լինի աճուրդ կապալով տալու համար քաղաքային տեղերը փայտէ շինութիւններով նրանց մէջ հանքային արհեստական ջրեր ծախելու համար հետեւեալ կէտերում: Գօլովինսկի հրապարակի վրա Գիմնազիսկայա փողոցի մօտ 1, Ռէյտերի տան մօտ 1, Անտոնովի տան մօտ 1, փոստային կայարանի մօտ 1, Ալէքսանդրեան այգու մօտ Կազէօնայա պալատայի հանդէպ 1, Երևանեան հրապարակի վրա 3, և Հաւլաբարի հրապարակի վրա 1, ընդամենը 9 տեղ շինութիւններով: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր մինչև օրվայ մէկ ժամը:

1—3

Պատիւ ունիմ յայտնելու յարգոյ հասարակութեան, որ ստացել իմ մեծ քանակութեամբ **ՖՕՏՕԳԷՆ՝ ՄԷԿ ՏԱԿԱՌԻՑ** (որ պարունակում է 12-ից մինչև 20 փութ) **ՊԱԿԱՍ** չի վաճառուի: Գայմանների մասին կարելի է դիմել **ԻՄ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ** որ գտնվում է **ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ № 42 ԵՒ ԴՎՈՐՑՈՎՈՅԻ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱՑ ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ ԴԻՄԱՑԸ** պ. Մեհրաբեանի խանութում: Իսկ սեպտեմբերի 1-ից, բացի այդ, կունենամ պահեստներ (склады) Ագդաշ, Գանձակ, Աղստաֆա, Միխայլով Քութայիս և Փոթի.

ԳԻՕՐԳԻ ՔԱՐԹՎԵԼՈՎ.

1—3

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսուն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստութիւնները հոգացող կարգադրիչ ցանձնաժողովը խնդրում է այն պարոններին, որոնք որ և է **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկանում են ստանալ **ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ** կամ հաղորդել նորան, որ բարեհաճեն **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա **ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԻԻ ՄԷՋ № 170:** Գրասենեակը բաց է **ԱՄԵՆ ՕՐ** առաւօտեան 9 ժամից մինչև 11 ժամը:

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՆՏԱՆԻՔ առաջիկայ սեպտեմբերից յանձն է առնում **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ** բնակարան և **ԿԵՐԱԿՈՒՐ** տալ բաւական ձեռնտու պայմաններով: **ԴԱՍԵՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ** համար առանձին պայմաններ: Վարձի մասին կարելի է տեղեկութիւն ստանալ **Գ. ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՑ** իր **ՏՊԱՐԱՆՈՒՄ**, փոստատան ետևի փողոցի վրա:

7—8

ԹԷՑ առաջին հունձի այս տարի չափազանց գունաւոր և հոտաւէտ: Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ ֆրայ, Շեվիլլի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մանչերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ վերլի, ԹԱՄԲԵՐ Բարնեբիի, կոլմանի նշոշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կէս գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:**

21—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐՔՈՅԿ

„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ“

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցասէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱԵԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի լրագրական խանութում: Գինն է 20 կոպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցէով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

10—25

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Սերգէյ Վասիլեվիչ **ՉԵՄԵՍՕՎ** տեղափոխվեցաւ Գօլովինսկի հրապարակ, տուն Բէլօր:

4—6

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ անդամակցութեան **ՏՈՄՍԱԿ** ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական ժողովի **ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ**, որ գտնվում է **ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՅՈՒՄ № 170.** ՏՈՄՍԱԿԻ գինը 2 բուբլ է:

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօր: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

издаваемый въ г. Тифлисѣ

(годъ второй)

Открыта полугодовая подписка на журналъ съ 1 іюля 1882 г. по 1 января 1883 года. Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к., на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Полугодовые подписчики могутъ взносить при подпискѣ 3 р. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ администраціи журнала Сололакская улица д. № 10 и въ Москвѣ и въ С.-Петербургѣ въ книжнихъ магазинахъ И. П. Анисимова.

9—10

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 բուբլ է, կէս տարվանը 4 բուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուենդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուռմի վալնիկներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) րէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ուլթռներ, Բրիտանկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեատատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուլիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պղսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, չչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

112—180

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Августа 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.